

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿՍՆԻՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ. Ա. Ռ. Ն. Ա. (Պուկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
նեալ միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Ծանուցման տղը 20 սանթիմ. երե-
փեկ տեղի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԵՐԿՈՒ ԱՆԿԵՂԾ ԽՍՐԲ

(Շար. նախորդ քիւնն եւ վերջ)

Միւս կողմէ սակայն, չափազանց
նռանդոտ յեղափոխականներ ալ
հրաժարելու են ջանքեր ընելէ
հակառակ իրականութեան ապա-
ցուցանելու թէ ազատութեան
ձգտող ամեն ազգեր Յոյն, Սերպ
Պուկար եւն. նոյն տեսակ եւ նոյն
չափ տառապանքներ կրեն, նոյն
քան աղէտներէ անցեր են ինչպէս
մենք, եւ ետք հասեր են իրենց
նպատակին եւ թէ հետեւապէս
պատմական անխուսափելի հարկ
մըն էր որ մենք գայինք հասնէ-
ինք այս վիճակին: Այս կը նշա-
նակէ թէ պէտք էր որ մենք հար-
իւր հազարներով կոտորուէինք,
իստեն հազար որբեր ունենայինք,
անոնց մէկ փոքր մասն իսկ խնա-
մելու անկարող դառնալով եւ մեր
հայրենիքին մէկ ծայրէն միւսը
թշուառութիւնը եւ սովը տի-
րելով սպառնային թուրքերուն
գոթսային հալածանքներուն հետ
միացած՝ միգրի մօտ տարիներու
մէջ բնաջինջ ընել եւ այս ամէնը՝
անանկ սոսկալի հանգամանքներու
մէջ ուր յայտ նշոյլ մը իսկ չի
կենար մօտաւոր փրկութեան:
Յայտնապէս սխալ է այս: Ոչ մէկ
ազատուած քրիստոնեայ ազգ մի-
րիններուն չափ ահաւելի աղէտներու
ենթարկուելու ու ապա՝ ազատու-
թեան յոյսի տեսակետով այնքան
անպատաս փհատեցուցիչ ներքին
եւ արտաքին հանգամանքներու մէջ
խրուելու մնացեր է որքան մենք
այսօր:

Եթէ ամէն ինչ որ պատահե-
ցաւ մեզի, անհրաժեշտ հարկա-
ւոր էր որպէս զի կարենանք ա-
զատիլ թրքական լուծէն, ասկէ
ուղիղ տրամաբանութեամբ կը
հետեւի թէ միեւնոյն ուղղութեամբ
եւ միեւնոյն միջոցներով պարտինք
անխափան շարունակել մեր յեղա-
փոխութեան շարժումները: Այս սակայն
անըմբռնելի, անհաս-
կանալի է գրեթէ ամեն հայու
համար, սա պարզ պատճառով որ
միեւնոյն շարժումներու վերականգն-
հիմայ, արդի հանգամանքներուն

մէջ, կրնայ իսլամական կատաղու-
թեան երկրորդ եւ գուցէ աւելի
ահաւոր պոռթկում մը առաջ բե-
րելով, Հայաստանը լայնատարած
գերեզմանատան մը փոխել հայ
տարրին համար, քանի որ ամենա-
հաւանական հաշիւներով, առայժմ
բնաւ չենք կրնար յուսալ որ ար-
տաքին զօրաւոր միջամտութիւն
մը գայ մեր կոտորիչներուն բա-
զուկը կասեցնել:

Ծայրայեղ կարմիրներուն այս
օրինակ անխորհուրդ պահանջնե-
ներուն, տեսալ տեսակ պոռոտա-
խօսութիւններուն եւ բացազան-
չութիւններուն նպատակը, ինչպէս
կերեւի, միտքերը թշնամիին դէմ
գրգռութեան մէջ պահել եւ յեղա-
փոխութեան աւելի տրամադրել է,
սակայն, եթէ չեմ սխալիր, անոնք
աւելի հակառակ արդիւնք կու-
տան, իրենց բացայայտ անամէ-
ջութեամբ միտքերը իրենց դէմ
ըմբոստացնելով եւ ատով յեղա-
փոխութեան գաղափարին վերա-
ծարձման եւ տարածման խոչնդոտ
ըլլալով:

Ես կը կարծեմ թէ աւելի բա-
նաւոր եւ օգտակար պիտի ըլլար
մէկ կողմէն մեր աղէտները եւ մեր
արդի վիճակը իրենց բոլոր անօրի-
նակ ծանրութեամբը լաւ ճանչնալ
ու ճանչցնել, մեր սխալները ինչ-
պէս նաեւ յեղափոխութեան մէջ
գործուած գեղձումները, խաչագո-
ղութիւնները եւայլն անկեղծօրէն
խոստովանել, միւս կողմէ մեր
գեղձագողութիւններուն պատաս-
խանատուութիւնը յանդիմանի ի-
րարու վրայ բեռնելու չի
ջանալով, երբ իսկապէս մեզ-
մէ ոչ մէկուն, ոչ մէկ կուսակցու-
թեան վրայ կը ծանրանայ ան:
Այսպէս ոչ միայն ճշմարտութիւ-
նը եւ իրականութիւնը լաւ ըմբռ-
նելով կրնանք անոր համեմատ մը
տածել լրջօրէն ու օրոշիլ թէ ինչ
պարտինք ընել ասկէ ետքը, այլ
եւ մեր արդի յեղափոխութեան
անպայման համակիրներուն, հա-
կակիրներուն եւ չեղք նկատուած
չըջանալիներու միջեւ կրնայ հա-
մերաշխութեան նոր կապ մը գո-
յանալ: Անկեղծութիւնը եւ ուղ-
ղամտութիւնը անշուշտ պիտի գան

այն ատեն միացնել անկեղծ, մա-
քուր, հայրենասէր տարրերը, ո-
րոնցմէ շատ կան, հաւատացէք, թէ՛
յեղափոխական, թէ՛ չեղք, եւ թէ
հակաիւղափոխական կամ այսպէս
նկատուած դասակարգին մէջ:

Հարկ է ըսել թէ ասանկ մեր-
ձեցում մը ինչ գնահատելի ար-
դիւնքներ պիտի արտադրէր:

Սակայն ո՞վ է մտիկ ընողը:
Ասկէ տարի մը առաջ իրաւունք
«Ուղիղ Դատենք» խորագրով
յօդուածներու շարք մը հրա-
տարակեց, ուր միեւնոյն
փաստերով ցոյց տուած էր
թէ մեր աղէտներուն պատասխա-
նատուութիւնը պէտք չէ բեռնել
միայն եւ ուղղակի յեղափոխական-
ներու ուսին վրայ: Կը յիշեմ որ
այդ յօդուածները ընդհանրապէս
լաւ տպաւորութիւն թողոցին,
բայց վայրկեանապէս: Ու դարձ-
եալ այդ անհիմն դատողութեան
վրայ յարձակումները շարունակե-
ցին ու կը շարունակեն յեղափո-
խութեան դէմ: Ու ես չունիմ յա-
ւակնութիւն յուսալու թէ իմ տը-
կար ձայնը, որ կը բարձրանայ
կոչում ընելու համար իրարու հա-
կառակորդ շրջանակներու՝ աւելի
անկեղծութիւն եւ ուղղամտութիւն
կիրառել իրարու հանդէպ, աւե՛-
լի արձագանք գտնէ: Բայց թե-
րեւս բոլորովին անօգուտ ալ չանց-
նի երթայ:

Ա. Ա.

ՀԱՅ ԿԻՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ Ս.

ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

Պատմութիւնն մեզ ցոյց կուտայ
թէ՛ հայ կինն, հայրենեաց եւ կը-
րօնի ազատութեան, տոհմային
աւանդութեանց եւ ազգային շա-
հերու պաշտպան եւ աւանդապահ
հանդիսացած է ա՛յն դարերու մէջ,
երբ կը կարծուէր թէ՛ կին էակն
ստեղծուած է միայն հրապուրելու
եւ սրտեր գերելու համար: Այսօր,
մինչ հայ կինը իրեն սեփական
բարոյական յատկանիշներու հետ,
մտային պէսպէս հանգամանքնե-
րով ալ օժտուած կը թուի, մինչ

հայ իգական սեռն՝ կրթիչ պաշ-
տօն եւ դեր վարելու վստահու-
թիւնն կը ներշնչէ մեզ, մենք
պահանջկոտ կը դառնանք եւ կը
փափագինք որ հայ կինն ունենայ
իր՝ դերն ազգային վերաշինու-
թեան Ս. գործին մէջ:

Հինգերորդ դարուն, վարդա-
նանց շահատակութեան ժամանակ,
փափկասուն հայ տիկիներն, նա-
զելաշուք, նորապսակ հարսերն,
զոհեցին իրենց անգործն եւ հան-
գիստն, թողին ամեն սեթեւեթ
ու պերճանք, զարդ ու զարդա-
րանք, միացան իրենց ամուսին-
ներու, եղբայրներու, զաւակներու,
խրախուսեցին զանոնք, յորդորե-
ցին կուրծք տալ թշնամոյն. ու
գեւորեցին իրենց արեւակիցքն,
պարուրեցին սրտերն. հայրենեաց
ազգին եւ եկեղեցւոյ սիրով ներ-
շնչեցին հայ քաջազունքն, հրա-
րեցին, բորբոքեցին անոնց խանդն
ու եռանդն. անոնցմէ շատերն
պատերազմի դաշտին վրայ բոլո-
րանուէր միացան իրենց սիրական-
ներու, վիրաւորեալներու վէրքերն
կապեցին ու բալասան դրին. շա-
տերն ալ իրենցներուն հետ ան-
վեհեր նահատակուեցան, մարտի-
րոսացան: Ահա՛ այդ պաշտելի
կանանց օրինակին նմանիլ պար-
տաւոր են, արդի սրտոտ, վեհօ-
գի հայ կիներն. պէտք է որ ի-
րենց ամուսիններու, զաւակներու,
տղայոց, ըսեմ աղջկանց ալ՝ հայ-
րենասիրութիւն ներշնչող՝ հրեշ-
տակուհիներ ըլլան:

Ո՛հ, հայ տիկիներ եւ աղջիկ-
ներ, հայ ազնուահոգի ամուսին-
ներն, բարոյական դաստիարա-
կութեամբ սնած հայ երիտասարդ-
ներն, ձեզմէ ո՛չ գեղ, ո՛չ դրամ
կը պահանջեն, այլ ազգային ներ-
շնչումներով պարուրուած ձեր
սիրտն կուզեն. անոնք կը ցանկան
որ դուք, ծեծծեցումներ, պճնիլ,
չպարուել, սորվելէ աւելի՝ գիտ-
նաք ոգեւորել այն սիրտերն ու-
րոնք հայրենեաց, ազգի եւ հայ
եկեղեցւոյ համար բարախելէ ալ
դադրել են. պէտք է որ գիտ-
նաք ձերայնոց հոգիներն բոցա-
վառել. յուսահատութեան մատ-
նուած հայութիւնն կամ անոր մէկ
մասն՝ որ դասալիք խոյս կուտայ

պատերազմի ճգնաժամին, այս պէտք է այդ վեհերոսներն արիւնքնել, սրտապնդել, խրախուսել, ատիկայ ձեր նուիրական պարտքն է:

Ազնուհոգի հայ կիներ և նազելաշուք աղջիկներ, թօթափեցէք արեւելեան տին մեղկութիւնն որ ձեզմէ շատերու բաժին ինկած է, ինչպէս և երիտասարդներու շատերուն ալ. մի՛ թողուք որ ձեր կտրիճներն բաղդի անողոք վճիռներու առջեւ խոնարհին. ուսուցէք թէ՛ անվհատ գործունէութեան պտուղն՝ ուշ կամ կանուխ պիտի վայելենք: Դուք նախախնամութիւն էք ընտանեկան յարկերու, ընտանի տաճարին մէջ աւան բանէ առաջ, ազգայնութեան խորաններ կանգնեցէք ուր ձեր ամուսինք և մանկունք մով, իւր թո՛ղ վառեն, խունկ ու կնգրուկ թող ծխեն՝ ազգային ազատութիւնն ձեռք բերելու համար:

Դուք, ազնիւ հայ տիկիներ և աղջիկներ, ունիք բարերար և մեծ ներգործութիւն ձեր շուրջն ապրողներու վրայ, ուստի մի կորսնցնէք վայրկեան մը հայրենասիրական ներշնչումներով տոգորել բոլոր ձեր խօսակիցներն, ձեր կենակիցներն, ձեր բոլորանուէր չընկալներն: Զանազէք ձեր հաւատարմութեան, համեստութեան, պարզութեան հետ, ձեզ հանգիստներու, փոխանցել նաեւ հայրենասիրական զգացումներ. տուէք կայծ մը ձեր վառ վռտուն աչերէն, ազգի տաք սէրն ձեր հրահրուն կրծքէն, զգլխիչ գիւթիչ, բորբոքիչ բաւեր ձեր անբիծ բերնէն, որոնք, ձեր փափուկ շրթերէն թրթռալով երթան արմատ բռնեն ամեն ճշմարիտ ազգասէր հայու սրտի խորերն: ազգի փլած տունն կանգնելու համար:

Եւ մենք, որ այժմ կը գրուատենք Եղիշէի նկարագրած հայ փափկասուն տիկնայքն և կ'օրհնենք անոնց յիշատակն, երբ տեսնենք ձեր գործօն դերն ազգային վերաշինութեան Ս. գործին մէջ, զձեզ պիտի պաշտենք և անմահացնենք:

Վահրամ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս 11 յունիս 96

Օրմանեանի Պատրիարքութիւնը ա՛յ շատերուն անտանելի դարձած է. թէիւ դեռ կայ փոքրամասնութիւն մը որ կը կարծէ թէ այդ օրհնութիւն պատրիարքը խոհեմ քաղաքականութեան մը կը հետեւի և ստոնց համոզումը այն է թէ Օրմանեան յուսահատած Եւրոպացիներէն հայոցս համար գալիք բարիքէն, կը ջանայ Սուլթանի կառավարութեան հետ հաշտ ապրիլ, որպէսզի ասով կարող ըլլայ նոր խժոժութեանց առաջըն առնել և որբերուն ու սովատանջներուն սնունդ ու պարէն հասցնել, հակառակ պարագայի կառավարութեան կողմէ դժուարութեանց բաղխելու վտանգը կը տեսնէ:

Բայց ցաւալին այն է որ Օրմանեան Արթին բաշայի խորհրդով որչափ կը քծնի այնչափ և աւելի կառավարութիւնը անոր ուսերուն վրայ կը ծանրացնէ ուրանոր պահանջներ ու ճնշումներ, առանց գործադրելու իր փոխադարձ խոստումները: Ազգային վարչական ժողովոց որոշումները կառավարութեան մէկ թէզքէրէտով ջուրը կ'իյնան: Եւ իսկ մը առաջ Արդարութեան նախարարութենէն Պատրիարքին զրկուած պաշտօնավարութիւնը մը բացարձակապէս հրամայեց որ կրօն և ֆաղաքական ժողովները իրենց պաշտօնը շարունակեն, չընկնին աւարտած լինելն առանց նկատողութեան առնելու, որովհետեւ կայսերական կառավարութիւնը գոհ է եղեր այդ կրկին ժողովոց պաշտօնավարութենէն: Նախարարութեան այս նոր պաշտօնագիրը Սահմանադրութեան ջնջումը կը նշանակէ. Բայց Օրմանեան և Տատեան ստիպեցին ժողովականները որ այս նոր հրամանին ալ համակերպին հետեւաբար մօտ ամիսներու մէջ պէտք չէ սպասել Երեսփոխանական ժողովոյ գումարման և թերեւս բնաւ չի գումարման:

Ընդհին մէջ սկսած էին փայլիլ եւ որոց մասին պիտի խօսինք մեր երկրորդ մասին մէջ: Այս վերջին երկուքը կանչուած էին Յովհաննէս ազալի տեսարկները կարգաւորելու թարգմանելու համար:

Առջի օրերը Ալիին Յովհաննէս ազալի ըրած հարցումները քայմաքայմ ալ կրկնեց միեւնոյն խոստովեամբ. տմբաստանալը անխոռով պաղարկելու թիւնով մը կը պատասխանէր իրեն վերադրուած ամբաստանութիւնը հերքելով:

«Իստի ուրանա՞ն տակաւին, պիտի յամարիս. չպիտի խոստովանիս յանցանքդ. ի՞նչ, այդ խորամանկութեամբ կը յուսաս որ օձեղ պիտի աղատես. բայց չեմ գիտեր որ հոս պէտք է փաստեր կենան. բացէք սա ծրարը եւ աչքէ անցնեցէք տեսարկները ու թըղթերը:

մարուի, որովհետեւ Սահմանադրութեան վերաքննութիւնը գըլխաւորապէս այդ նպատակաւ էր որ ի մօտոյ միանգամ ընդմիջտ պիտի իրագործուի:

Անցեալ շաբթու Սամաթիոյ և շրջակայ թաղերու մի քանի փոքրներէն գրգռիչ յայտարարութիւններ գտնուեցան. կառավարութիւնը նախ ջանաց այնպէս ձեւացնել թէ ստոնց հեղինակները հայ յեղափոխականներ են. բայց բարեբախտաբար շուտ յայտնուեցաւ թէ մի քանի հայ լրտեսներու գործ է այդ. ձեւակերպութեան համար ասոնք ձերբակալուեցան. սակայն ոստիկանութիւնը անոնց լրտես ըլլալը չը գիտնալ կեղծելով նորանոր խստութիւններ և խուզարկութիւններ կ'ընէ, իբր միակ միջոց հայերէ գրած կորզելու:

Արդէն յայտնի է թէ Սուլթանի շքանշանները ինչ արժէք ունին. ասոր մէկ նոր ապացոյցը ահաւասիկ. Պոլսոյ թուրք լրագրաց հայ և թուրք բոլոր գըրաշարներուն Ե. կարգի Մէհմետիյէ, և «Մէրվէթ» լրագրի երկու հայ մեքենավարներուն իֆթիսար-շքանշանները տրուեցան:

Եւալ, 8 յունիս 1899

Ռուսմանիոյ Օրէնդարի Ժողովոյ Ընդհանուր Ընտրութիւնները

Հայ ընտրեալներ

Ռուսմանիոյ թագաւորութեան Օրէնդարի Ժողովներու անգամոց ընտրութիւնները վերջացան ամսոյս 4ին. Պահպանողական կուսակցութիւնը որ այսօր պետութեան ղեկը կը վարէ, ամբողջ երկրին մէջ յաղորդեցաւ իր կողմնակիցներն ընտրել: 193 պատգամաւորներու մէջ հազիւ 22 գիւմարդներ ընտրուեցան միւս կուսակցութիւններէ, այսինքն, ազատականներէ, սահմանադրականներէ եւ գրոշակեաններէ, սակայն այս ընտրեալները ամենքն ալ առանկարգ անձնաւորութիւններ

Հրամանը գործադրուեցաւ. ծրարը քակուեցաւ, Պոլսաքան եւ Նախիջեւան Սերոբէ թաղապետ Գրիգորի ներկայութեամբ տնտեսական աչքէ անցուցին նախապէս, որոնց մէկին մէջէն ելաւ Պոլսաքանի կեղծուած նամակը. Նախիջեւան գայի կարգաց եւ պարունակութիւնը թուրքերի թարգմանեց. նամակը հետեւեալը կը բովանդակէր.

«Սիրելի Յովհաննէս ազալ, «Գործերը կարգին են, թերթերը «կը ստացուին. Զեւարա գիւղն եւ «Երբ երիտասարդներ եկան մեզ գիւմարին, եթէ կարելի է ՀԱՅԱՍՏԱՆ «մը աւելի զրկեցէք որ անոնց յատկացնենք: Մեր այդ կողմերը զրուսուած ատեն խօսած էիք որ այս «տարի անպատճառ Ռուսսայ մը «պիտի գալ վերջնական կազմակերպութեան մը ծրագիրը պատրաստելու «եւ մեզի կանոնաւոր գործունէութեան»

ըլլալով՝ եթէ միանան, մեծ ընդգդիմութիւն կրնան ընել կառավարութեան: Ծերակոյտի ժողովոյ մէջ 126 անդամներու մէջ միայն 10-12 անդամք ընտրուեցան հակառակ կուսակցութիւններէ:

Այս անգամ ընտրութեանց առթով պատգամաւորաց սենեակը մտան երկու հայ անձինք՝ որ են Տեաք Գէ. Օ. Պատարապիւսեան եւ Ս. Գ. Բրունգուլեան, երկուքն ալ մեծ կալուածատէրներ են. իսկ Ծերակոյտի սենեակը մտան Տ. Գ. Կոյալեան՝ ներկայացուցիչ Սուլթանի գաւառի. և Տ. Պ. Միսիրեան ուսուցիչ և ներկայացուցիչ Եւալի համալսարանի: Հոս ուշադրութեան արժանի կէտն այն է որ համալսարանական խորհրդոյ մէջ ընտրութեան իրաւունք ունեցող 39 ուսուցիչներէ 30ը բուլեւարկութեան ներկայանալով՝ ասոնցմէ 29 ուսուցիչներ հայ ան. ձի մը նուիրեցին իրենց քուէն: Պատիւ իրեն:

Ռուսմանիոյ Օրէնդարի Ժողովներու մէջ Հայոցմէ ընտրեալներուն թիւը մերթ կ'աճի մերթ կը նուազի, այսպէս 1892ին ընտրութեանց մէջ ունեցանք վեց անգամ Ծերակոյտի սենեակին մէջ և միայն մէկ Պատգամաւորաց մէջ. 1875ին, 1884ին և 1895ին ընտրուեցան 1էն մինչեւ չորս հայ անգամներ: Ռուսմանիոյ մէջ գտնուած Հայոց քիչոր թուոյն համեմատութեամբ և ասկէ ալ շատերուն անտարբերութիւնը ինկատի առնելով, ընտրելոց թուերը որչափ փոքր ալ լինին, միշտ նշանակութեան արժանաւորութիւն ունին, վասն զի ասոնք աւելի անկախ կը ընտրուին միայն իրենց պատուոյ արժանաւորութեամբը:

Տեաք Գէորգ Օ. Պատարապիւսեան Պրայիւայ քաղաքին և գաւառին առաջին կարգի մեծ կալուածատէրներէ և համբաւաւոր վաճառականներէ մէկն է. ինքը պատգամաւոր ընտրուելէ ետքը 20,000 ֆր. նուիրեց գաւառապետ ոստիկանին 20 գեղացի աղջիկներ օժտելու համար իրենց ամուսնութեան առթիւ: Մարգասիրական

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (18)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նոյն օրը կէսօրէն երկու ժամ ետքը Յովհաննէս ազալն քայմաքայմին ներկայութեանը կանչուեցաւ կառավարական պաշտօնատունը. հոն էին նոյնպէս Ալի Էֆէնտին եւ վերի թաղապետ Գրիգորը, տունէն բերուած տետրակներու, նամակներու ծրարն ալ սեղանի մը վրայ դրուած էր կնքուած վիճակի մէջ. հոն էին նոյնպէս Լիճքցի Պոլսաքան, մեր ընթերցողներուն իր անունով միայն ծանօթ, Արմատնցի Սերոբ անուն երկու նշանաւոր հայ դաւաճաններ որ դեռ նոր այդ ասպա-

«Թեան վիճակի մէջ գնելու համար «այս մասին լուր մը տուէք մեզ: «Գործենք, էֆէնտիմ, գործենք. «գործենք քանի բարբարոս կառավարութիւնը քուէն մէջ կը խռկայ: «Հիմակուհիմայ մեր գաղափարաւորութիւնը յիստերի կը հասնի»:

Գ. Ն. Նամակին ընթերցումին եւ թարգմանութեան պահուն Յովհաննէս ազալի խելքը գլուխէն գնաց:

«Է, հիմայ նայինք ի՞նչ պիտի ըսես այս նամակին:

—Ի՞նչ նամակ էֆէնտիմ, ի՞նչ կը ըսէք:

—Ձեռ գիտի հա՛, քու տետրակներու մէջէն ելաւ, երկինքէն չինկա՞ւ ա. առանց այս պարագան ինք կատի ունենալով յուսացիր որ խուսաբուկ պատասխաններովդ արդարութեան ձեռքէն խուրդային գործերդ

և գովութեան արժանի բարեգործութիւն, սակայն ներքին լինի մեզ հարցնել թէ՛ իմացաւ արդեօք որ անգին իր ծնողաց և պապերուն հայրենիքը բերաւոր հայ անձինք քաղցու կը մեռնին և հազարաւոր որբեր անպատասխար կը մնան, և եթէ իմացաւ, զրկեց հոն ալ օգնութիւն մը 20 անտուղ բնութիւնը գոնէ ամիս մը ապրեցնելու ու սովէ մեռնելու սպառնալիքէն ազատելու համար: Կը համարձակիմ այս հարցումները դնել որովհետեւ մեր հայկական լրագիրները այսպիսի բարեգործական լուր մը չեն հազարդած իրենց ընթերցողներուն յիշեալ մեծանուն կալուածատէրին վրայօք: Կըսուի զայսմ Պրայիլայէն լուր մը տեսնել մեր լրագիրներէ մէկուն մէջ ալ թէ Տ. Գ. Օ. Պատարապիտանը բարեհաճեցաւ այս ինչ գումարն ալ Պատրիարքարան զրկել ի նըպաստ հայաստանի սովատանջողութիւններու:

Լուր՝

Ռուսներ, 9 յունիս 90

Ռուսներ Մանկապարտէզի խնամակալութիւնս պարտք կը համարէ հրապարակաւ իր խորին շնորհակալիքն յայտնել, այն ա. մեն ազնիւ ազգայնոց որք յունիս 6 կիրակի օրուան «Ինպաստ Մանկապարտէզ»-ի կազմակերպուած թատերական ներկայացման թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս նպաստեցին:

Նոյնպէս մեր անկեղծ շնորհակալութիւնը կ'յայտնենք «Վէստէ»-ի հայ թատերախմբին ազնիւ գե. րասաններուն, որոնք ո՛չ միայն փայլուն կերպով ներկայացուցին «Մառի Ժան» տաւալը, այլ և ա. մեն անձնութիւններն ցոյց տուին մեզի:

Ի գիմաց խնամակալութեանց Ատենադպիր Ատենապետ Ա. Դ. Վարդանեան Ի. Կ. Ասլանեան Ահաւասիկ ներկայացման հաշուեցուցակը:

ՄՈՒՏՔ

Տոմսերէ գոյացած ֆո. 222.—

Նուիրատուութիւններէ 57.—

281.—

պիտի ճողպարին: Այո՛, այո՛, դուն կասկած չունիմ որ ապագայ Հայաստանին զինուորներէն կամ թիւրքու հրամանատարներէն մէկը պիտի ըլլայիր, եթէ թաթս քեզ չհամներ:

Այս լիտի բացատրութեան վրայ քայմաքանը դէպի դաւաճանները դառնալով սկսաւ քահքահել: Հայ մատնիչները կապիկի պէս անոր հետեւեցան:

Յովհաննէս աղան կատաղութեանն չուրթերը կը խածնէր. չորսեր թէ ինչ ընէ այդ ահուկի ամբաստանութեան դէմ. նամակը տեսնել ուղեց. քայմաքանը ձեռքը առնելով գրուածքը ցցեց իրեն, այդ գիրը իրեն շատ անձանթ գիր մը չէր, Պուտաքեանի գրին նմանութիւն ունենալը ենթադրեց. սակայն չկրցաւ վճռապէս հաստատել այդ բանը:

«Եֆէնտիմ, կը խեղդեմ, այս նա-

ԵԼՔ	
Դերասան. և նուագարանի 75.—	
Տպագրութեան և ցրուիչի 10.50	
Չուտ հասոյթ 195.50	
—	281.—

Գանձապետ
Բերնզ Գ. Աշխատանք

ԲՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒՆԿՈՒՄ

«ՍՈՎԵԼ ՈՅ ԹԱՆՁԱԺՈՂՈՎԻՆ»

Ի ՊՈՒՐԿԱՅ

ՄՈՒՏՔ

1899 Մայիս 3ի գիշերուան ներկայացումէն գոյացու	401.—
Պնակէն	20.10
—	421.10

ԵԼՔ

Թատրոնի ծախք	30.—
Նուագարանի	20.—
Թատրոնի սպասաւորին	2.—
Տոմսակներու ծախք	12.—
Ջանազան ծախքեր	10.20
Ապառիկներ	6.—
Մոմի համար	—70
Դրամ զրկուելու ծախք	2.25
Նամակի եւ թուղթի	—35

Ընդհանուր ծախքն է	88.50
Չուտ հասոյթն է	337.60
(զոր մայիս 12 թուականով զրկած ենք Պատրիարքարան-ը)	421.10

Ի գիմաց Սովետից Թանձաժողովի Ասենադպիր Ասենապետ

Արմէն-Շիրազի Մարտիտ Պողիկեան

1899 յունիս 8

Պուրկազ

ԼՐԱՔԱՂ

Այգ. Պատրիարքարանի ելեւ. մտացոյցը հաւասարակշիւութեամբ ազգային տուրք վճարելու տրամադրութիւնները քաջալերելու համար որոշած է ի հարկին պատժական տրամադրութիւն ալ ի գործ դնել, ընտրողական ամեն իրաւունքէ զրկելով չվճարողներն:

—Հանրաժանութիւն Ամասիացի հայ վաճառական իբրանոսեան եղբարք իրենց հայրենիքին մէջ վաճառա-

կանական դպրոց մը հաստատել են:

—«Սապահ»-ի խմբագիր Մ. Ե. սաքէֆ. Քոչունեան՝ որ «Քասիմ» կը ստորագրէ, Նարեկի աշխարհաբար թարգմանութիւնն հրատարակելու արտօնութիւն ստացաւ:

—Չալաթիոյ Կեդր. վարժարանը Բերա պիտի փոխադրուի: Նաեւ Պատրիարքարանը կաշխատի Չալաթիոյ եկեղեցւոյ դիմացի երեք հանրատուններուն ալլուր փոխադրման համար:

—Սկիւտարի Ամերիկեան Գոլէճի տարեկան հանգէսը Դ. օր կատարուեցաւ ի ներկայութեան զեսպանաց և հիւպատոսաց. Քոչէճի շրջանաւարտ 4 աշակերտուհիներէն երեքը հայ գաւառացի աղջիկներ են, որք իրենց գործելու ապարէզ ընտրած են ուսուցչութիւնը:

Նաեւ Ռօպէթ Գոլէճի այս տարուան 9 շրջանաւարտներէն 4ը հայեր են:

—Գեր. Ներսէս եպիսկ. Ասլանեան քանի մը շաբաթէ ի վեր իր պաշտօնատեղին վան հասած ու գործի ձեռնարկած է. Լա. տինաց որբանոցէն փախչող 27 որբերը, որոնք վարագայ որբանոցը տեղաւորուած էին, խնամուելու ու կրթելու համար որբանոցի սահմանեալ ամսաթոշակին վրայ յաւելում մը ընել խնդրած էր Պատրիարքարանէն: Նպաստեց Թանձաժողովն որոշած է 10 ոսկւոյ յաւելում մը ընել:

—Ճանիկի Առաջն. Տեղապահը ինպաստ սովետից Մամսնի, Պաֆ. րայի և Չարշապայի մէջ հանգանակութիւն կատարելով 81 ոսկի հաւաքած ու զրկած է Պատրիարքարան: Մ. Նահանգաց Բրօվտէնս քաղաքին մէջ հաւաքուած 138 անգլ. ոսկին ալ Պատրիարքարան հասած է:

Ամերիկայի Ռուսերը Նահանգէն ևս 7,735 զր. զրկուած է:

—Ալեքոյ ազգ. որբանոցի բացումը կատարուած է, ուր այժմ կը պատասպարուին 26 որբեր: Որբանոցին նախնական պիտոյից և

թեան բուն տէրը:

—Եֆէնտիմ, հաւատացէք որ այգ. պիտի մէկը չեմ ճանչնար. նորէն կը կրկնեմ ասոր մէջը անսիրտ խաղ մը կայ, խաբեքայութեան մը զոհել կուզէք զիս:

—Կառավարութեան աչքին փոշի փչելու համար, քեզմէ առաջ շատ շատեր այդ եղանակով խօսեր են մեզ. սակայն վերջապէս փաստը փաստ մնալով զանոնք ջախջախած ենք: Վերջին խօսքիդ կը սպասեմ. ո՞վ է այդ Գ. Ն. անձը:

Ամբաստանեալը զգաց որ ծուղակը անճողպարի է. ասոր վրայ կոչում ընելով իր ստանաւորութեան եւ հոգեկան կորովին ճշմարիտ ստոյկի մը պէս յօնքերը լարեց եւ:

«Վերջին խօսքս կուզէք, այնպէս չէ՛. դարան մը լարուած է ինձի դէմ եւ շատ կարելի է որ ասոր մէջ զուգ

կահաւորման համար քաղաքին մէջ 5,000 զր. հանգանակուել է:

—Քաղաքիս ազգ. երկսեռ վարժարանաց հրապարակային տալիկան քննութիւնները պիտի սկսին յառաջիկայ կիրակի օր: Եկեղեցիի տաւարտուէն յետոյ, ժամը 10 1/2ին և պիտի վերջանան 12 օրուան մէջ: Քննութեան ժամերն են ամին օր, առաւօտեան ժամը 9 1/2—12, կէս օրէն յետոյ 2 1/2—5:

«ԻՐԱՆԻՆԻՔ»-ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մ. Ա. Վառնա. — Ստացանք ձեր յօդուածը եւ երկրորդ նամակը. յօդուածը երկու գլխաւոր պատճառներով չէր կարելի հրատարակել. նախ՝ ձեր որոշ ստորագրութիւնը մեզ չէր յայտնած. երկրորդ՝ գրուածքը շատ ճապաղ էր:

—Մեր գործակատարներէն կը խնդրուի որ հաճին իրենց քով հաւաքուած մեր գրամները ընդ փոթ զրկել մեզ:

ԿԷՕՄՐԻԻԲԼԷՐ

Թիւրքիանը կէօմրիւք նէզա. ընթերցանքն ըստին նէշը օլընան ճէտփիլէ պինտէն, 1895 մարտ 1տէն՝ 1896 փետրվար նիհայէթի. նէ գաստըր Պուկարիտան թիւրքիայա 87,728,264 զր. լըգ մալ իտիալ օլընմը. միւտտէթի մէզ. քիւրէտէ, Եանի 12 այ զարֆըն. տա թիւրքիտան Պուկարիայա կէլէն մալլէրին մէճմուր զըյմէթի 34,709,889 զր. ա պալիզ օլմը տըր, Եանի Պուկարիա թիւրքիանը ի.քի պուչուգ միւլի զիյա. տէ մալ իլարաճ իթմիշ տիր. Սլթան. պօլըն թիւճարէթ Օտտաը պու ճէտփիլէ կէօլ Էօնիւնէ ալմասըն. տա շու պէօյիւք ֆարգը կէօրիւպ հայրէթտէ գալմը. վէ մէմալիքի Օսմանիյէնին թիւճարէթիւնէ նա. գիտէ կէթիւրէն շու հալա պիր նէթիճէ վէրիմէսի իչիւն Պապը Ալիյէ միւրաճաւթիւ, Պուկարի. տա թիւրքիա մալլարընտան ա. լընան Օ/Օտէ 16 կէօլիւք բու.

ալ մատ ունիք. Գ. Ն. անունով մարդ չեմ ճանչնար ըսի, չհաւատացիք. նա մակին գիրը տարակոյսս բոլորովին հաստատեց որ այդ նամակը դուք պատրաստած էք եւ չգիտեմ ինչ նըկատումով անմեղի մը հետ խաղ կը փորձէք:

Քայմաքանը այսքան համարձակութիւն չէր սպասել Յովհաննէս աղայէն, անոր տուած բացատրութիւններուն վրայ օձի մը պէս ֆշաց եւ ոտքի ելնելով ամբաստանեալին քիթին բերանին փառաւոր ապստակ մը փակցուց անոր երեսն ի վար սրիկայ պոռալով, Յովհաննէս աղա փոխադարձաբար պիտի բզկալէր զայն եթէ հոն եղողները չը միջամտէին:

Այս միջադէպէն ետքը ոստիկաններ գալով բանտարկեալը իր տեղը տարին:

Շ. Կառնալիսկան

Շարունակելի

